



**«Կառավարության ֆինանսների կառավարման
տեղեկատվական համակարգի» ներդրման ծրագրի
ՓՈՒԼ 2.2-ի Հաշվետվություն**

**ԿՖԿՏՀ ներդրման մոդել
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՈՒՄ**

Հասպակումներ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
ԿՖԿՏՀ	Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգ
ՀՀՀՀ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում
ՀՀՀՀՍ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներ
ՀՀԱԳԿՀՄՎ	Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչություն
ԿՖՎ/ GFS	Կառավարության ֆինանսների վիճակագրություն/ Government Finance Statistics
ՔՕՏՀ	Քաղճառայության տեղեկատվական հարթակ

Բովանդակություն

Հապավումներ.....	2
Ներածություն.....	5
1. Ուսումնասիրության ամփոփում	5
1.1 Եզրակացություն.....	8
2. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մոդուլի կառուցվածք.....	8
2.1 Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մոդուլի ենթամոդուլներ	10
2.1.1. «Գլխավոր գիրք» ենթամոդուլ.....	10
2.1.2 Պաշարների, ծառայությունների հաշվառում ենթամոդուլ	11
2.1.3 «Գործընկերների հաշվառում» ենթամոդուլ	11
2.1.4 «Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլ.....	12
2.1.5 «Հիմնական միջոցների հաշվառում» ենթամոդուլ	12
2.1.6 «Վաճառքներ» ենթամոդուլ.....	13
2.1.7 «Կադրերի հաշվառում» ենթամոդուլ.....	13
2.1.8 «Աշխատավարձի հաշվառում» ենթամոդուլ.....	14
2.1.9 «Դրամական հոսքերի կառավարում» ենթամոդուլ	14
2.1.10 «Ձեռքբերում» ենթամոդուլ.....	15
2.2 ԿՖԿՏՀ այլ մոդուլներ և նրանց կապը «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի հետ	16
2.2.1 «Գանձապետարան» մոդուլ	16
2.2.2 «Բյուջետավորում» մոդուլ	16
2.2.3 «Պետական պարտքի և բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարում» մոդուլ	16
2.2.4 «Գնումներ» մոդուլ	17
2.3 Արտաքին համակարգեր և նրանց կապը «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի հետ	17
2.3.1 E-invoicing համակարգ.....	17
2.3.2 ԻԱՊՌ, ԲՊՌ համակարգեր.....	17
2.3.3 ՔՕՏ համակարգեր	18
2.3.4 Պետական գույք, Կադաստր, Ոստիկանություն (փոխադրամիջոցներ)	18
2.3.5 ՊԵԿ համակարգ	19
3 Հանրային հատվածի հաշվապահության մոդուլի ֆունկցիոնալ նկարագրություն.....	24
3.1 Գործընկերների ձևավորում.....	24
3.2 Ձեռքբերման գործընթաց.....	26
3.3 Մեծածախ իրացում	28

3.4 Մանրածախ իրացում.....	30
3.5 Կադրերի գործընթաց	31
3.6 Աշխատավարձի գործընթաց.....	32
3.7 Դրամական ներհոսքերի գործընթաց.....	33
3.8 Դրամական արտահոսքերի գործընթաց	35

Ներածություն

Սույն փաստաթղթում ներկայացված է ՀՀ Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման (ՀՀՀՀ) կազմակերպման և վարման տարբեր գործառնությունների ուսումնասիրության ամփոփումը, դրա հիման վրա տրված եզրակացությունները, ինչպես նաև Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) շրջանակում Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մոդուլի ներդրման համար առաջարկվող ֆունկցիոնալ և կառուցվածքային տարբերակներ:

Առաջարկվող տարբերակը ստեղծվել է առկա գործընթացների ուսումնասիրության արդյունքում և հիմք կհանդիսանան հետագայում ԿՖԿՏՀ տեխնիկական առաջադրանքը (տվյալ պարագայում՝ ՀՀՀՀ մոդուլի մասով) մշակելու համար:

Փաստաթուղթը կազմված է հետևյալ բաժիններից.

Ուսումնասիրության ամփոփում – ամփոփված են ՀՀՀՀ կազմակերպման և վարման գործառնությունները, դրանցում կիրառվող էլեկտրոնային համակարգերը, ինչպես նաև ներկայացված է ընդհանուր եզրակացություն:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մոդուլի կառուցվածք – ներկայացված են ՀՀՀՀ մոդուլի կառուցվածքային սխեմաներ՝ ԿՖԿՏՀ համատեքստում, ներքին կոմպոնենտներ (ենթամոդուլներ), դրանց փոխհարաբերությունը միմյանց և արտաքին կոմպոնենտների հետ:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մոդուլի ֆունկցիոնալ նկարագրություն – ներկայացված են ՀՀՀՀ մոդուլի կոմպոնենտների (ենթամոդուլների) ֆունկցիոնալ նկարագրության տարբերակներ:

1. Ուսումնասիրության ամփոփում

Հանրային հատվածի կազմակերպությունները պետական գրանցման պահից մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով վերակազմակերպումը կամ լուծարումը պետք է վարեն հաշվապահական հաշվառում: Ուսումնասիրել ենք, թե տվյալ պահին ՀՀ-ում ինչպես են իրականացվում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման վարման գործընթացները, ՀՀՀՀՄ-ին համապատասխան առանձին և համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման, պետական բյուջեի կատարման և GFS հաշվետվությունների կազմման և ներկայացման համար օգտագործվող գործիքակազմը: Ուսումնասիրել ենք նաև, թե նկարագրված հաշվետվությունների ստացման համար ինչ համակարգեր են օգտագործվում: Արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ-ում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման վարման գործընթացներով նշված հաշվետվությունների (բացառությամբ առանձին մակարդակում կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների) ավտոմատ գեներացում չի իրականացվում: Այս պահին հանրային հատվածի հաշվապահական հաշվառման վարման համար յուրաքանչյուր կազմակերպությունում օգտագործվում է առանձին հաշվապահական ծրագիր (մեծամասամբ՝ «ՀՕ - հանրային հատված»):

Նշենք նաև, որ հանրային հատվածի բոլոր ներկա ծրագրերը համապատասխանում են ՀՀ կառավարության՝ «Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառում վարելու հնարավորությունն ընձեռող համակարգչային ծրագրերի՝ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանության որոշման կարգը և դրանց ավտոմատացված համակարգերի նկատմամբ պահանջները սահմանելու մասին» 26/03/2015 թ. N 313-Ն որոշման պահանջներին: Սակայն տվյալ պահանջներում բացակայում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների ավտոմատ գեներացնելու գործիքակազմը, ինչպես նաև բյուջեի կատարողականի և ԿՖՎ (GFS) հաշվետվությունների ստացումը: Կարելի է արձանագրել, որ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման գործընթացը իրականացվում է թերի, և չկա մի համակարգ, որով իրականացվի ամբողջական հաշվառում և գեներացվի վերոնշյալ համախմբված հաշվետվությունների փաթեթը: Բացառություն են կազմում բյուջեի կատարողականի հաշվետվությունները, որոնք այս պահին գեներացվում են LS Finance համակարգի միջոցով: Սակայն նույնիսկ այդ հաշվետվություններում միայն դրամական հոսքերն են, որ ավտոմատ են ստացվում. հաշվեկշռային մնացորդները հաշվապահները հաշվետվություն մուտքագրում են ձեռքով՝ օգտվելով հաշվապահական հաշվառման համակարգի տվյալներից:

Այս պահին հանրային հատվածի հաշվապահական հաշվառման տարբեր գործընթացների համար օգտագործվում են հետևյալ համակարգերը/ծրագրերը՝

- «ՀՕ - հանրային հատված» կամ այլ համակարգ
- Microsoft Excel ծրագիր
- Client-Treasury համակարգ
- E-invoicing համակարգ
- Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ (ՊԵԿ)
- Գույքահարկի և հողի հարկի հավաքագրման ծրագիր
- E-comunity համակարգ
- Mulberry համակարգ
- Էլեկտրոնային փոստ (mail, gmail և այլն):

«ՀՕ - հանրային հատված» ծրագրով կամ այս պահին կիրառվող այլ համակարգերի միջոցով, ծրագրում եղած ենթամոդուլներով հնարավոր է իրականացնել առանձին կազմակերպության հաշվապահական հաշվառման վարումը, բայց այն չի ապահովում նշված հաշվետվությունների ամբողջական ձևավորումը: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նշվել է, որ հաշվապահական հաշվառման համակարգում հողամասերի վաճառքի ժամանակ առաջանում են ծրագրային դժվարություններ այն մասով, որ տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող հողամասերի մասնակի վաճառքի դեպքում պետք է առանձնացնել վաճառքի ենթակա հատվածը, բայց համակարգի միջոցով հողամասերի չափման միավորի տարանջատում հնարավոր չէ իրականացնել:

Կազմակերպությունները իրենց հաշվապահական հաշվառման տվյալները գրանցում են և ամփոփում են **Microsoft Excel ծրագրի** աղյուսակներում:

Client-Treasury համակարգի միջոցով իրականացվում է կազմակերպությունների միջև դրամական միջոցների շարժը:

E-Invoicing համակարգի միջոցով կազմակերպությունները իրականացնում են ձեռքբերման, ծառայությունների մատուցման և (կամ) սպրանքների վաճառքի փաստաթղթաշրջանառությունը:

Petekamutner.am կայքում հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությունները ներկայացնում են իրենց ամսական, եռամսյակային և տարեկան հարկային հաշվետվությունները:

Գույքահարկի և հողի հարկի հավաքագրման ծրագրի և **E-comunity** համակարգի միջոցով տեղական ինքակառավարման մարմինները իրականացնում են իրենց պարտքերի ձևավորման և վճարման գործընթացը:

Mulberry համակարգը տեղեկատվության փոխանակման գործընթաց է՝ նախատեսված պետական կառույցների համար: Հավելենք, որ տվյալ համակարգից ոչ բոլոր կազմակերպություններն են օգտվում:

Էլեկտրոնային փոստի (mail, gmail և այլն) միջոցով կազմակերպություններն իրականացնում են տեղեկատվության փոխանակում:

ՀՀ Կառավարության 26/03/2015 թ-ի N 313-Ն որոշման մեջ նկարագրված են հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի ծրագրային պահանջները, մոդուլի կառուցվածքը, որը ներկայացնում է հանրային հատվածի հաշվապահական հաշվառման վարման շրջանակը: Նկարագրենք նաև, թե ինչ ենթամոդուլներ են օգտագործվում տեղեկատվության ստացման և պահանջվող տեղեկատվության տրամադրման համար:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման վարման ընթացքում ձեռքբերումների և իրացումների, որոնց մասով իրականացվում է գործընկերների դեբիտորական և կրեդիտորական պարտքերի անալիտիկ հաշվառում, տեղեկատվության ստացման (ձեռքբերումների դեպքում) և տրամադրման (իրացման դեպքում) փաստաթղթաշրջանառության համար կիրառվում է E-Invoicing համակարգը: E-Invoicing համակարգից ստացված հաշիվների հիման վրա կազմակերպությունը անցկացնում է գործարքի մանրամասները իր հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում: Սպրանքների վաճառքի կամ ծառայությունների մատուցման դեպքում գրանցամատյաններում ձևավորվում է համապատասխան փաստաթուղթը, որի հիման վրա գործարքի տվյալներն անցկացվում են E-Invoicing համակարգ: Այս ամենի արդյունքում ձևավորվում են կազմակերպությունների ակտիվները և պարտավորությունները: Հաշվապահության գործընթաց է կազմում նաև կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի հաշվարկները՝ համաձայն օրենսդրության պահանջների: Կազմակերպությունների յուրահատկությունից էլնելով՝ աշխատավարձի հաշվարկման ժամանակ կարող են հանդիպել դժվարություններ՝ կապված համակարգի ֆունկցիոնալության հետ, կամ նման հաշվարկները իրականացվում են առանձին ծրագրի միջոցով: Հանրային հատվածի կազմակերպությունների կրեդիտորական պարտքերի մարման համար ստեղծվում է վճարման հանձնարարագիր, որը ներմուծվում է Client-Treasury համակարգ և կատարվում է փաստացի վճարում՝ պարտքի մարում: Դեբիտորական պարտքերի մարման գործընթացը իրականացվում է Client-Treasury համակարգի միջոցով, որտեղից տվյալները ներմուծվում են հաշվապահական

համակարգ և որի հիման վրա ձևավորվում է դեբիտորական պարտքի մարում հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում:

Իրականացված հաշվապահական հաշվառման գործընթացների փաստաթղթաշրջանառության արդյունքը արտացոլվում է ժամանակաշրջանի հաշվետվություններում՝ ֆինանսական հաշվետվությունները առանձին մակարդակով ներկայացվում են Ֆինանսների նախարարություն էլեկտրոնային փոստի միջոցով՝ ըստ պահանջի, իսկ հարկային հաշվետվությունները ներկայացվում են հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով (ՊԵԿ):

Առանձին կազմակերպությունների հաշվապահության վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը նկարագրված է «Հ6 - հանրային հատվածի հաշվապահական հաշվառման վարման գործընթացում»:

1.1 Եզրակացություն

Իրականացրած ուսումնասիրության արդյունքում եկել ենք այն եզրակացության, որ տարբեր գործիքակազմի կիրառությունը միևնույն գործընթացների համար ոչ օպտիմալ տարբերակ է հանրային հատվածի հաշվապահական հաշվառման կազմակերպման համար, որի արդյունքում առաջանում է՝

- տվյալների անհամապատասխանություն,
- հաշվապահական հաշվառման վարման խիստ վերահսկողության բացակայություն,
- տեղեկատվության կենտրոնացված մշակման բացակայության,
- ավտոմատ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ստացման անհնարինություն:

Գործընթացների օպտիմալացման համար կարևոր է ԿՖԿՏՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեկ միասնական մոդուլի ներդրումը, որը թույլ կտա՝

- համապատասխանեցնել տվյալներ,
- կենտրոնացված մշակել տեղեկատվություն,
- իրականացնել գործընթացների հաջորդական և օպտիմալ կազմակերպում,
- համախմբել հաշվետվություններ,
- ստանալ բյուջեի կատարողական/համեմատական հաշվետվություններ, կամ դրա համար անհրաժեշտ ինֆորմացիան տրամադրել բյուջետավորման մոդուլին,
- ստանալ ԿՖՎ/GFS հաշվետվությունները՝ համապատասխան դասակարգիչներով:

2. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մոդուլի կառուցվածք

ԿՖԿՏՀ Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեկ միասնական մոդուլի ներդրումը պետք է հնարավորություն տա՝

- հաշվառումը իրականացնել հնարավորինս պարզ,
- հնարավորինս ինտեգրված լինի արտաքին մոդուլների հետ,

-ապահովի գրանցամատյանների, սկզբնական փաստաթղթերի ձևավորումը՝ համաձայն օրենսդրության,

-ունենա ճկուն կոնֆիգուրացիա՝ հաշվի առնելով գերատեսչական առանձնահատկությունները, ինչը թույլ կտա օգտագործողին արագորեն ճշգրտել հաշվարկման մեջ հիմք հանդիսացող պարամետրերը, երբ կարգավորող իրավական ակտերը փոփոխվեն՝ առանց մասնագետների ներգրավման,

-մի քանի հաստատությունների (կառուցվածքային ստորաբաժանումների) հաշվառում պահելու հնարավորությունը մեկ տվյալների բազայում (կենտրոնացված հաշվառում)՝ օգտագործելով ընդհանուր տեղեկատուներ և դասակարգիչներ: Տվյալ պարագայում հաշվետվությունները կարող են ձևավորվել ինչպես համախմբված, այնպես էլ յուրաքանչյուր հաստատության համար:

-հանրային հատվածի հաշվապահական հաշվառման հաշվային պլանի և 2007թ-ի հունվարի 9-ին ընդունված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 5-Ն հրամանում նկարագրված դասակարգիչների, ինչպես նաև ԿՖՎ/GFS կոդերի միջև կապի միջոցով ստանալ նաև բյուջեի կատարողական և ԿՖՎ/GFS հաշվետվությունները (ըստ տարբեր մակարդակների՝ նախարարություն, պետություն, ՊՈԱԿ, համայնք):

Հաշվի առնելով նշված սկզբունքները՝ մոդուլի ներդրումը իրականացնելու համար ուսումնասիրել ենք այն գործիքակազմը, որի միջոցով իրականացվում է հանրային հատվածի հաշվապահական հաշվառման կազմակերպումը, դրանց ֆունկցիոնալ հնարավորությունները և նրանցում պահանջվող այն փոփոխությունները և ավելացումները, որոնք կբավարարեն վերը նշված խնդիրները լուծելու համար: Ֆունկցիոնալ հնարավորությունները ապահովելու համար մոդուլը կառուցված է լինելու հետևյալ ենթամոդուլներից՝

Գլխավոր գիրք

Պաշարներ, ծառայություններ

Գործընկերների հաշվառում

Պայմանագրերի կառավարում

Հիմնական միջոցներ

Վաճառք


Կադրեր

Աշխատավարձ

Դրամական հոսքերի կառավարում

Ձեռքբերում

Նկար 2.1 Հանրային հատվածի հաշվապահության մոդուլի առաջարկվող կառուցվածքային սխեմա



2.1 Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մոդուլի ենթամոդուլներ

2.1.1. «Գլխավոր գիրք» ենթամոդուլ

«Գլխավոր գիրք» ենթամոդուլը նախատեսված է հաշվային պլանի հաշիվների (սինթետիկ, անալիտիկ ու ենթաանալիտիկ հաշիվների) թղթակցությունների գրանցման և ամփոփման համար: «Գլխավոր գիրք» ենթամոդուլը պետք է հնարավորություն ունենա՝

- Մուտքագրելու/ներմուծելու կազմակերպությունների սկզբնական մնացորդները՝ հաշվային պլանի սինթետիկ և անալիտիկ հաշիվների մակարդակներով,
- Ենթամոդուլների միջև տեղեկատվություն ստանալու և ամփոփելու:

«Գլխավոր գիրք» ենթամոդուլը, ստանալով անալիտիկ հաշվառման ենթամոդուլների կողմից մշակվող գործառնությունների և այլ իրադարձությունների գրանցման հաշվապահական թղթակցությունները հաշվային պլանի հաշիվների համապատասխան մակարդակով, այդ տեղեկատվությունը ամփոփում է հաշվային պլանի տարբեր մակարդակների հաշիվների և շարժի տեսքով: «Գլխավոր գիրք» ենթամոդուլը հարկային հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում ՊԵԿ էլեկտրոնային համակարգին:

2.1.2 Պաշարների, ծառայությունների հաշվառում ենթամոդուլ

«Պաշարների, ծառայությունների հաշվառում» ենթամոդուլի միջոցով պետք է իրականացվի հանրային հատվածի կազմակերպությունների պաշարների և ծառայությունների ձեռքբերման հետ կապված հաշվառումը՝ ըստ պայմանագրի, ծրագիր-միջոցառումների և CPV-ների: Պաշարների ձեռքբերման դեպքում ենթամոդուլը պետք է հնարավորություն ունենա կատարել նաև լրացուցիչ ծախսերի վերագրում արժեքին, ինչպես նաև ներքին տեղաշարժի, տեսակավորման, գնահատման, ծախսագրման և իրացման քանակագումարային հաշվառումը, մնացորդների ամփոփումը ըստ տարբեր պահման վայրերի (պահեստների):

Հաշվառումը սինթետիկ և անալիտիկ մակարդակներով՝

-Անալիտիկ մակարդակով հաշվառումը պաշարների դեպքում իրականացնել ըստ գտնվելու վայրերի, յուրաքանչյուր պաշարի խմբաքանակի, քանակի, տվյալ պաշարի ֆիզիկական չափման միավորի, իսկ ծառայությունների դեպքում՝ ըստ ծառայության անվանման և ծավալի:

-Ենթամոդուլի սինթետիկ մակարդակով հաշվառման արդյունքում պաշարների հետ կապված ցանկացած փոփոխության (իսկ ծառայությունների դեպքում՝ ստացման) ժամանակ պետք է գեներացվի թղթակցություն Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հաշիվներով:

«Ձեռքբերում» ենթամոդուլում ստեղծված ձեռքբերման փաստաթուղթը արտացոլվում է «Պաշարներ, ծառայություններ հաշվառման» ենթամոդուլում:

Պաշարների իրացման դեպքում ենթամոդուլը «Վաճառք» ենթամոդուլին տրամադրում է քանակագումարային տեղեկատվություն ապրանքացանկի վերաբերյալ, իսկ ծառայությունների մատուցման դեպքում ծառայության անվանումը և ծավալը:

2.1.3 «Գործընկերների հաշվառում» ենթամոդուլ

«Գործընկերների հաշվառում» ենթամոդուլը պետք է իրականացնի գործընկերների անալիտիկ հաշվառումը, նրանց հետ կապված շարժի և մնացորդների ամփոփումը: Գործարքների արդյունքում կատարված ձևակերպումը հաշվային պլանի հաշիվներով՝ ըստ ծրագիր-միջոցառման, գործընկերոջ և վերջինիս հետ կնքված պայմանագրերի: Դրա արդյունքում կձևավորվեն կազմակերպությունների դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, նրանց հետ կապված փոփոխությունները, իսկ կնքված պայմանագրերի հիման վրա ըստ ժամանակացույցի կազմակերպությունները կկարողանան վերահսկել դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, անհուսալի ճանաչման, դուրսգրման հաշվապահական հաշվառման կարգի պահանջը: Նաև նախատեսվում է ծախսային և եկամտային հաշիվները վարել ըստ գործընկերների, որպեսզի հնարավոր լինի իրականացնել Հանրային հատվածի կազմակերպությունների միջև կատարված գործարքների փոխբացառումը:

«Գործընկերների հաշվառում» ենթամոդուլում ցանկացած գործարքի դեպքում կատարվելու է նաև սինթետիկ (հաշվային պլանի հաշիվներով) թղթակցությունների ձևակերպում, որը հասանելի է լինելու և ամփոփվելու է «Գլխավոր գիրք» ենթամոդուլում: Կատարված իրացման

համար գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվելու «Վաճառք» ենթամոդուլին: Գործընկերների հաշվառման ենթամոդուլը տրամադրում է գործընկերների տվյալները ըստ պայմանագրի «Ձեռքբերում» ենթամոդուլին՝ ձեռքբերման հետ կապված տվյալների մշակման համար:

2.1.4 «Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլ

«Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլը նախատեսված է պայմանագրի պայմանների ժամանակին կատարման, պայմանագրային պարտավորությունների կատարման և հետևողական կառավարման համար: Պայմանագրի կառավարման գործընթացն ավելին է, քան պայմանագրի պատճենների արխիվացումը և պահպանումը հետագա օգտագործման համար: Պայմանագրի մաս է կազմում աշխատանքների կատարման կամ ապրանքների գնման ժամանակացույցը և CPV ցանկը, ինչպես նաև վճարման ժամանակացույցը:

«Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլը «Դրամական հոսքերի կառավարում» ենթամոդուլին տրամադրում է պայմանագրի տվյալները ներհոսքերի և արտահոսքերի իրականացման ժամանակ:

Վաճառքների, ձեռքբերումների, ստացված և մատուցված ծառայությունների ժամանակ «Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլը տրամադրում է տվյալներ «Վաճառքներ», «Գործընկերներ» ենթամոդուլներին և «Գանձապետարան» մոդուլին՝ պայմանագրով նախատեսված ծավալների և ժամկետների վերաբերյալ, որի համեմատականը փաստացի տվյալների հետ ձևավորվում է «Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլում, և թույլ է տալիս ստանալ կարևոր վերլուծական տվյալներ և պայմանագրի կառավարումը իրականացնել արդյունավետ:

2.1.5 «Հիմնական միջոցների հաշվառում» ենթամոդուլ

«Հիմնական միջոցների հաշվառում» ենթամոդուլը նախատեսված է ոչ ընթացիկ ակտիվների՝ հիմնական միջոցների, բարձրարժեք ակտիվների, չարտադրված (բնական ծագում ունեցող) ակտիվների, կենսաբանական ակտիվների, ներդրումային գույքի, ոչ նյութական ակտիվների և այլ ոչ ընթացիկ ակտիվների (բացառությամբ ֆինանսական գործիքների) յուրաքանչյուր միավորի անալիտիկ հաշվառման, ըստ նույնականացված առանձին ակտիվների, նրանց հետ կապված ֆինանսական և ոչ ֆինանսական գործողությունների գրանցման և տեղեկատվության ներկայացման համար: «Ձեռքբերում» ենթամոդուլում ստեղծված ձեռքբերման փաստաթուղթը արտացոլվում է «Հիմնական միջոցների հաշվառման» ենթամոդուլում:

Հիմնական միջոցի ձեռքբերումը պետք է գրանցվի ըստ գործընկերների, գործընկերոջ պայմանագրի, ծրագիր-միջոցառման և CPV-ի, որի հիման վրա տեղեկատվություն է տրամադրվելու «Գործընկերների հաշվառում» և «Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլներին կրեդիտորական պարտքի և պայմանագրի կատարման վերաբերյալ:

Հիմնական միջոցների իրացման դեպքում «Հիմնական միջոցների հաշվառում» ենթամոդուլը «Վաճառք» ենթամոդուլին տրամադրում է հիմնական միջոցների յուրաքանչյուր միավորի վերաբերյալ ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվություն:

«Հիմնական միջոցների հաշվառում» ենթամոդուլում ցանկացած գործարքի դեպքում կատարվելու է նաև սինթետիկ (հաշվային պլանի հաշիվներով) թղթակցությունների ձևակերպում, որը հասանելի է լինելու և ամփոփվելու է «Գլխավոր գիրք» ենթամոդուլում:

Հիմնական միջոցների հաշվառման ենթամոդուլը Անալիտիկ հաշվետվողական մոդուլին տրամադրում է ամբողջական տեղեկատվություն:

2.1.6 «Վաճառքներ» ենթամոդուլ

«Վաճառքներ» ենթամոդուլի միջոցով նախատեսվում է իրականացնել կազմակերպության իրացումները: Քանի որ կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու ժամանակ իրացման դեպքում օգտագործվում են տարբեր համակարգեր, կամ ոչ մի համակարգ չի օգտագործվում, այս ենթամոդուլի միջոցով նախատեսվում է ապահովել կազմակերպություններում վաճառքի իրականացումը և գրանցումը: Վաճառքի իրականացման դեպքում ենթամոդուլը համապատասխան անալիտիկ տեղեկատվություն է վերցնում «Պաշարներ, ծառայություններ», «Հիմնական միջոցներ», «Գործընկերներ», «Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլներից: Այս ենթամոդուլը նախատեսվում է ներդնել ապահովելու կազմակերպություններում նաև մանրածախ վաճառքի իրականացումը և գրանցումը: Մանրածախ վաճառքի ժամանակ տեղեկատվություն կտրամադրվի ՊԵԿ համակարգին ՀԴՄ սարքի միջոցով: Վաճառքի իրականացման դեպքում ենթամոդուլը համապատասխան անալիտիկ տեղեկատվություն է վերցնում «Պաշարներ, ծառայություններ» ենթամոդուլից:

Իրականացնելով վաճառք՝ «Վաճառքներ» ենթամոդուլը տրամադրում է գործընկերների դեբիտորական պարտքի ձևավորման տեղեկատվությունը՝ «Գործընկերների հաշվառում» ենթամոդուլին, գործընկերների պայմանագրերի հետ կապված տվյալները՝ «Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլին: Իրականացնելով վաճառքը, «Վաճառքներ» ենթամոդուլը «Գլխավոր գիրք» ենթամոդուլին տրամադրում է հաշվային պլանի հաշիվներով հաշվապահական թղթակցությունները, որտեղ ամփոփվում են տվյալները: «Վաճառքներ» ենթամոդուլը կազմակերպության կողմից կատարված վաճառքի տվյալների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում E-invoicing համակարգին վաճառքի, տեղափոխման էլեկտրոնային եղանակով գրանցման համար:

2.1.7 «Կադրերի հաշվառում» ենթամոդուլ

«Կադրերի հաշվառում» ենթամոդուլը նախատեսված է աշխատակիցների մասին պատմական տվյալների հաշվառման և պահպանման համար, որը հնարավորություն կտա ավտոմատացնել կադրերի կառավարման ներքին գործընթացները, կնպաստի աշխատավարձի ավտոմատացված հաշվարկին և հաշվետվությունների ստացմանը: Կադրերի հաշվառման ենթամոդուլը կունենա հետևյալ հնարավորությունները՝

- անձնակազմի հաշվառում
- հրամանների հաշվառում (ընդունման, ազատման, փոխադրման հրամաններ և այլն)
- կազմակերպության հաստիքացուցակի ձևավորում և վարում
- աշխատակիցների արձակուրդայինների գրաֆիկի ձևավորում, չօգտագործած արձակուրդային օրերի հաշվառում

-աշխատակիցների ընդհանուր և հանրային հատվածում աշխատանքային ստաժի հաշվարկում:

«Կադրերի հաշվառում» ենթամոդուլը տրամադրում է «Աշխատավարձի հաշվառում» ենթամոդուլին աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև հնարավորություն կունենա «ՔՕՏՀ» համակարգին անհրաժեշտության դեպքում տրամադրել տվյալներ այն աշխատակիցների վերաբերյալ, որոնք համարվում են հանրային ծառայության, պետական պաշտոն զբաղեցնող աշխատակիցներ:

«Կադրերի հաշվառում» ենթամոդուլը կօգտագործվի այն դեպքում երբ տվյալ կազմակերպությունը կադրային հաշվառման համար չի օգտագործում կամ մասամբ է օգտագործում ՔՕՏՀ համակարգը:

2.1.8 «Աշխատավարձի հաշվառում» ենթամոդուլ

«Աշխատավարձ» ենթամոդուլը նախատեսված է օրենսդրական պահանջներին համապատասխան աշխատակիցների աշխատավարձի, արձակուրդայինի, նպաստների և այլ հատուցումների հաշվարկման համար: Հաշվարկման և վճարման դեպքում ենթամոդուլը կձևավորի դեբիտորական և կրեդիտորական պարտքերը ըստ առանձին աշխատակիցների:

«Աշխատավարձի հաշվառում» ենթամոդուլը աշխատավարձի հաշվարկման և վճարման արդյունքում ձևավորված հաշվապահական թղթակցությունները կտրամադրի «Գլխավոր գիրք» ենթամոդուլին:

«Աշխատավարձի հաշվառում» ենթամոդուլը աշխատավարձի վճարման տվյալները կտրամադրի «Դրամական հոսքերի կառավարում» ենթամոդուլին:

«Աշխատավարձի հաշվառում» ենթամոդուլը աշխատակիցների աշխատավարձի և այլ հավելումների և պահված հարկերի տվյալները տրամադրում է ՊԵԿ հաշվետվությունների էլեկտրոնային համակարգին՝ եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկի տեսքով:

«Աշխատավարձի հաշվառում» ենթամոդուլը Անալիտիկ հաշվետվողական մոդուլին տրամադրում է ամբողջական տեղեկատվություն:

2.1.9 «Դրամական հոսքերի կառավարում» ենթամոդուլ

«Դրամական հոսքերի կառավարում» ենթամոդուլը նախատեսված է կազմակերպության դրամական միջոցների մուտքերի, ելքերի և մնացորդի կառավարման համար: Այդ մոդուլում են ձևավորվում դրամարկղի մուտքի և ելքի օրդերները, բանկային քաղվածքները, վճարման հանձնարարականները: «Դրամական հոսքերի կառավարում» ենթամոդուլը թույլ է տալիս դրամական միջոցները դարձնել կառավարելի՝ ժամանակին մարել բյուջեի, բանկերի, գործընկերների նկատմամբ պարտավորությունները:

«Դրամական հոսքերի կառավարում» ենթամոդուլը տրամադրում է «Գանձապետարան» մոդուլին վճարումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Ենթամոդուլը տեղեկատվություն է տրամադրում «Գործընկերների հաշվառում» և «Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլներին դրամական միջոցների ներհոսքերի և արտահոսքերի արդյունքում առաջացած գործընկերների մնացորդի վերաբերյալ՝ ըստ

պայմանագրերի: «Գործընկերների հաշվառում» և «Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլից են տվյալներ տրամադրվում «Դրամական հոսքերի կառավարում» մոդուլին:

«Աշխատավարձի հաշվառում» ենթամոդուլից ստանում է յուրաքանչյուր աշխատակցին վճարման ենթակա գումարների վերաբերյալ տեղեկատվությունը:

«Դրամական հոսքերի կառավարում» ենթամոդուլը «Գլխավոր գիրք» ենթամոդուլին տեղեկատվություն է տրամադրում բոլոր ներհոսքերի և արտահոսքերի սինթետիկ հաշիվներով (հաշվային պլանի հաշիվներով) թղթակցությունների վերաբերյալ՝ ներառյալ այն դրամական շարժերի վերաբերյալ, որոնք չեն արտացոլվում ոչ «Գործընկերների հաշվառում» ենթամոդուլում, ոչ էլ «Աշխատավարձի հաշվառում» ենթամոդուլում. օրինակ՝ արտարժույթի փոխարկում, հաշվի համալրման, արտարժույթային հաշվի վերագնահատման և այլն:

2.1.10 «Ձեռքբերում» ենթամոդուլ

«Ձեռքբերում» ենթամոդուլը նախատեսված է կազմակերպության իրացման, տեղափոխման, ստացված հաշվարկային փաստաթղթերի և վերադարձի փաստաթղթերի վարումն ապահովելու համար: Իսկ E-invoicing համակարգից ստացված հաշվարկային փաստաթղթերի հիման վրա տվյալները մշակվում են «Ձեռքբերում» ենթամոդուլի միջոցով, ապա պաշարների և ստացված ծառայությունների համար տեղեկատվությունը տրամադրում է «Պաշարներ, ծառայություններ» ենթամոդուլին, իսկ հիմնական միջոցների տեղեկատվությունը՝ «Հիմնական միջոցներ» ենթամոդուլին: Ձեռքբերման փաստաթուղթը գրանցելիս «Պաշարներ, ծառայություններ» ենթամոդուլը «Գործընկերների հաշվառում» ենթամոդուլին տրամադրում է պարտքի ձևավորման վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ պայմանագրի, CPV-ի կոդերի և ամսաթվի: Եթե հնարավոր լինի «Ձեռքբերում» ենթամոդուլը ինտեգրել արտաքին տեղեկատվական համակարգերի հետ՝ Պետ. գույք, Կադաստր, Ոստիկանություն, որոնք կտրամադրեն հիմնական միջոցի նույնականացման կոդի վերաբերյալ տեղեկատվություն, ապա հնարավոր կլինի արդյունավետ իրականացնել հիմնական միջոցների տվյալների մշակումը, կառավարումը մեկ համակարգում:

2.2 ԿՖԿՏՀ այլ մոդուլներ և նրանց կապը «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի հետ

2.2.1 «Գանձապետարան» մոդուլ

«Գանձապետարանի» մոդուլը նախատեսված է բյուջատային դասակարգմանը համապատասխան պետական բյուջեի եկամուտների հաշվառման, նախնական հսկողությամբ ծախսերի ֆինանսավորման և հաշվառման, պետական գանձապետական և արտաբյուջետային հաշիվների վարման և պետական ընդհանուր ռեսուրսների հետ գործառնությունների իրականացման համար (տես. Գանձապետարանի օպտիմալացման առաջարկ փաստաթղթում): «Գանձապետարան» մոդուլը Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի «Դրամական հոսքերի կառավարում» ենթամոդուլին տրամադրում է դրամական ներհոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը: «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլը տեղեկատվություն է տրամադրում «Գանձապետարան» մոդուլին դրամական արտահոսքերի և պայմանագրերի վերաբերյալ:

2.2.2 «Բյուջետավորում» մոդուլ

«Բյուջետավորման» մոդուլը նախատեսված է պետական մարմինների կողմից բյուջետային հայտերի կազմման, ինչպես նաև, եկամուտների կանխատեսման, բյուջեի հավասարակշռման և համայնքների հաստատված բյուջեների ստացման գործընթացները իրականացնելու համար: Արդյունքում հնարավոր է լինում ձևավորել պետության մասշտաբով համախմբված բյուջե (պետական բյուջե + համայնքային բյուջե՝ տես Բյուջետավորման օպտիմալացման առաջարկ փաստաթղթում): «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման» մոդուլը «Բյուջետավորում» մոդուլի «Ծախսակազմում» ենթամոդուլին տրամադրում է պաշարների, պայմանագրերի, հիմնական միջոցների, աշխատավարձի, իրացումների, գործընկերների հաշվառման, դրամական հոսքերի կառավարման վերաբերյալ տեղեկատվությունները ծախսակազմման գործընթացի արդյունավետ իրականացման համար:

2.2.3 «Պետական պարտքի և բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարում» մոդուլ

«Պետական պարտքի և բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարում» մոդուլը նախատեսված է պարտքի ներգրավման, աճուրդի կազմակերպման, էլ.վաճառքի, գործակալների ռեեստրի, մուրհակների, վարկերի և պարտքերի, վարկային երաշխիքների կառավարման համար (տես՝ Պետական պարտք, Գործընթացների օպտիմալացման և ավտոմատացման առաջարկ փաստաթղթում):

«Պետական պարտքի և բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարում» մոդուլը տրամադրում է «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի «Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլին պարտքի ներգրավման և մարման, վարկի, պարտքի, մուրհակների, վարկային երաշխիքների տվյալները՝ հաշվառումը իրականացնելու համար:

Պետական պարտքի մոդուլից ՀՀՀՀ մոդուլում ավտոմատ պետք է ձևակերպվեն ստացված և տրամադրված վարկերը, մուրհակները, արժեթղթերով իրականացված գործարքները, հաշվեգրված տոկոսները:

2.2.4 «Գնումներ» մոդուլ

«Գնումներ» մոդուլը նախատեսված է գնումների պլանավորման, գնման գործընթացի իրականացման (կախված գնման ձևից), պայմանագրերի կառավարման, ինչպես նաև գնումների համակարգողների որակավորման շնորհման քննության անցկացման և վերապատրաստման համար (տես՝ Գնումներ օպտիմալացման առաջակ փաստաթղթում):

«Գնումներ՝ մոդուլը տրամադրում է «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի «Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլին գնման գործընթացի իրականացման արդյունքում պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը:

2.3 Արտաքին համակարգեր և նրանց կապը «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի հետ

2.3.1 E-invoicing համակարգ

E-invoicing-ը (Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր և գրքեր) համակարգ է՝ Էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրումը և առաքման-տեխափոխման Էլեկտրոնային գրքերի վարումն ապահովելու համար: Ծրագիրը հնարավորություն է տալիս առցանց ռեժիմում դուրս գրել հաշվարկային փաստաթղթեր, ստեղծել, դադարեցնել կամ վերագրանցել առաքման-տեխափոխման Էլեկտրոնային գրքեր, ինչպես նաև վարել գրանցված գրքերը: Ծրագրի օգնությամբ հնարավոր է դիտել դուրս գրված և այլ անձանցից ստացված հաշվարկային փաստաթղթերը: Ցանցից դուրս ռեժիմում ծրագիրը թույլ է տալիս նաև նախապատրաստել նոր հարկային հաշիվներ կամ խմբագրել նախկինում լրացված հաշվարկային փաստաթղթերը, գրառումներ կատարել նախապես բացված առաքման-տեխափոխման Էլեկտրոնային գրքերում: E-invoicing համակարգը «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի «Ձեռքբերում» ենթամոդուլի հետ ինտեգրման արդյունքում հնարավոր կլինի հաշվարկային փաստաթղթերի տեղեկատվությունը ստանալ և տրամադրել ավտոմատ կերպով:

2.3.2 ԻԱՊՌ, ԲՊՌ համակարգեր

ԲՊՌ-ն (Բնակչության պետական ռեգիստր) տեղեկատվական համակարգ է, որը նախատեսված ՀՀ-ում բնակվող անձանց, ինչպես նաև օտարերկրյա պետություններում բնակվող ՀՀ քաղաքացիների, ըստ բնակչի և բնակության վայրի, հաշվառման համար: ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած, ՀՀ-ում մշտական բնակության վայր չունեցող և մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակվող անձը ՀՀ քաղաքացու անձնագրի ստանալիս Բնակչության պետական ռեգիստրում հաշվառվում է օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով: Համակարգում նշվում են անձի անհատական տվյալները՝ համաձայն Բնակչության պետական ռեգիստրի մասին ՀՀ օրենքի: ԿՖԿՏՀ-ի շրջանակներում ԲՊՌ համակարգի ինտեգրումը

«Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի «Կադրեր» ենթամոդուլի հետ հնարավորություն կստեղծի ստանալ հանրային ծառայող և պետական պաշտոն չգրադեցնող բնակչի անհատական տվյալները աշխատանքի ընդունման դեպքում: ԲՊՌ համակարգի կողմից կտրամադրվի «Գործընկերների հաշվառում» և «Պայմանագրերի կառավարում» ենթամոդուլներին ֆիզիկական անձանց անհատական տվյալները ծառայությունների մատուցման, պաշարների վաճառքի գործարքների իրականացման ժամանակ:

ԻԱՊՌ համակարգի գործարկման նպատակն է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գրանցումը ՀՀ տարածքում, կրճատել իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման տևողությունն ու մեկ պատուհանի կիրառման միջոցով ապահովել իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումը մեկ այցի ընթացքում, նույնականացման քարտի միջոցով կատարել առցանց գրանցումներ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրանցում, անհատ ձեռնարկատիրոջ հաշվառում, ինչպես նաև կատարել կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարի անձնագրային տվյալների փոփոխություն: ԻԱՊՌ համակարգի ինտեգրումը «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի հետ հնարավորություն կտա պայմանագրի ձևավորման դեպքում «Պայմանագրերի կառավարում» և «Գործընկերների հաշվառում» ենթամոդուլներին տրամադրել իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի տվյալները, ինչպես նաև նրանց կարգավիճակը՝ արդյոք կազմակերպությունը գործող է, թե ոչ:

2.3.3 ՔՕՏ համակարգեր

ՔՕՏՀ-ն նախատեսված է քաղաքացիական ծառայության ղեկավարումը և միասնականությունը ապահովելու համար՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Համակարգի միջոցով իրականացվում է հանրային ծառայության մարդկային ռեսուրսների պաշտոնների արդյունավետ կառավարումը, դասակարգումը և հանրային ծառայության, պետական պաշտոններ գրադեցնող անձանց վարձատրության քաղաքականության մշակումը: Եթե ԿՖԿՏՀ-ի շրջանակներում հնարավոր լինի ՔՕՏՀ-ն ինտեգրել «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի «Կադրեր» ենթամոդուլի հետ, ապա հնարավորություն կստեղծվի տրամադրել հանրային ծառայության (բացառությամբ համայնքային ծառայության) պետական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքի վայրի, պաշտոնի, վարձատրության և այլ տվյալներ:

2.3.4 Պետական գույք, Կադաստր, Ոստիկանություն (փոխադրամիջոցներ)

Պետական գույքի և Կադաստրի համակարգերը նախատեսված են անշարժ գույքի հաշվառման, գնահատման, գույքի պահպանվածության կառավարման համար: Պետական գույքի հաշվառումը ապահովում է անշարժ գույքի վիճակի և չափերի, նպատակային նշանակության, օգտագործողների և օգտագործման ձևերի վերաբերյալ տեղեկությունների գրանցումը պետական գույքի հաշվառման գրանցամատյանում: Նպատակն է կանխատեսել պետական գույքի նկատմամբ պետության հեռանկարային պահանջը:

Կադաստրի համակարգը նախատեսում է գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում, որն ընդգրկում է՝

1) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի, օգտագործման իրավունքի, հիփոթեքի, հողամասի կառուցապատման, սերվիտուտի, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ գույքային իրավունքների ծագման, դադարման, փոխանցման, փոփոխման պետական գրանցումը,

2) անշարժ գույքի տնօրինման, օգտագործման կամ տիրապետման իրավունքների նկատմամբ սահմանափակումների, ինչպես նաև գույքային իրավունքների իրականացման սահմանափակումների կիրառման, փոփոխման, դադարման պետական գրանցումը:

Ոստիկանության առցանց հարթակը նախատեսված է փոխադրամիջոցների նկատմամբ սեփականության իրավունքի, գույքային իրավունքի ծագման սահմանափակումների կիրառման պետական գրանցման համար:

ԿՖԿՏՀ-ի շրջանակներում Պետ գույք, Կադաստր, Ոստիկանություն (փոխադրամիջոցներ) համակարգերի ինտեգրումը «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի «Հիմնական միջոցներ» ենթամոդուլի հետ հնարավորություն կտա տեղեկատվություն ստանալ գույքային համարի, պատկանելիության, վիճակի և այլ տվյալների վերաբերյալ, ինչը հնարավոր կդարձնի «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի «Հիմնական միջոցներ» ենթամոդուլի միջոցով իրականացնել գույքի արդյունավետ կառավարում:

2.3.5 ՊԵԿ համակարգ

ՊԵԿ (Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ) համակարգը նախատեսված է հարկային հաշվետվությունների հանձնման գործընթացը պարզեցնելու և հարկային հաշվետվությունների լրացումն ու ստուգումը ավտոմատացնելու համար: Համակարգը հաշվետվությունների լրացման ընթացքում կատարում է անհրաժեշտ ստուգումներ դաշտերի լրացման ճշտությունն ապահովելու նպատակով: Համակարգը հաշվետվությունների վրա աշխատելու գործիք է, այն արտացոլում է օրենսդրական և նորմատիվ բոլոր փոփոխությունները, որոնք առնչվում են հաշվետվությունների ներկայացմանն ու հարկային պարտավորությունների հաշվարկման դրույքաչափերին և բանաձևերին:

Համակարգի ինտեգրումը «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» մոդուլի հետ հնարավորություն կընձեռի հարկային հաշվետվությունների ավտոմատ ձևավորման, որը հնարավոր կլինի ներբեռնել ՊԵԿ համակարգ:

Ինտերֆեյս	Տվյալներ	Տրամադրող մոդուլ/ենթամոդուլ	Կիրառող մոդուլ/ենթամոդուլ
ՊՊ2	Պարտքի ներգրավման և մարման հաշվառում	Պետական Պարտք Մոդուլ	Հանրային Հատվածի Հաշվապահության/ Պայմանագրերի կառավարում

Գ5	Գնումների պայմանագիր և դրա կատարումը հիմնավորող տվյալներ	Գնումներ	Հանրային Հաշվապահության/ Պայմանագրերի կառավարում	Հատվածի
ԲՊ2	Մուրհակների, վարկերի և պարտքերի, բյուջետային երաշխիքների տրամադրման և մարման հաշվառում	Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման Մոդուլ/Վարկեր և Պարտքեր	Հանրային Հաշվապահության/ Պայմանագրերի կառավարում	Հատվածի
Գ22	Հաշիվների վերաբերյալ տվյալներ	Գանձապետարան/ Հաշիվների կառավարում	Հանրային Հաշվապահության/ Դրամական հոսքերի կառավարում	Հատվածի
ԷՀԱ1	Կազմակերպության ստացված ձեռքբերումներ	E-invoicing	Հանրային Հաշվապահության/ Ձեռքբերում	Հատվածի
ԲՊՌ2	Ֆիզիկական անձանց տվյալներ	ԲՊՌ	Հանրային Հաշվապահության/ Կադրեր	Հատվածի
Կ1	Աշխատակիցների տվյալներ	ՔՕՏՀ	Հանրային Հաշվապահության/ Կադրեր	Հատվածի
Հ2	Հավաստագրերի, պարտավորությունների ամփոփ տվյալներ, ֆինանսավորման հայտ Վճարման հանձնարարականներ Վերաձևակերպման հայտ	Հանրային Հաշվապահության/ Դրամական հոսքերի կառավարում	Գանձապետարան/ Հաշիվների կառավարում	Հատվածի
Հ3	Կազմակերպության կողմից կատարված իրացումների տվյալներ	Հանրային Հաշվապահության/ Վաճառք	E-invoicing	Հատվածի

Հ9	Աշխատակիցների տվյալներ որոնք հնարավոր է անհրաժեշտ է ՔՕՏՀ-ին	Հանրային հաշվապահության/ Կադրեր	Հատվածի	ՔՕՏՀ
Հ1	Հաշվառված տվյալներ Պաշարներ Պայմանագրեր (հավելված, ժամանակացույց, այլ) Հիմնական միջոցներ Աշխատավարձ Վաճառք Գործընկերների հաշվառում Դրամական հոսքերի տվյալներ	Հանրային հաշվապահություն Պաշարներ Գործընկերների հաշվառում Պայմանագրերի կառավարում Հիմնական միջոցներ Աշխատավարձ Վաճառք Դրամական կառավարում հոսքերի	հատվածի	Բյուջետավորում/Ծախսակազմում
Հ4	Աշխատակիցների պարտք Գործընկերների պարտք Պայմանագրերի կառավարում	Հանրային հաշվապահություն/ Գործընկերների հաշվառում Պայմանագրերի կառավարում Աշխատավարձ	հատվածի	Հանրային հաշվապահություն/ Դրամական հոսքերի կառավարում
Հ5	Անալիտիկ տվյալների տրամադրում	Հանրային հաշվապահություն/ Պաշարներ, Ծառայություններ Հիմնական միջոցներ Գործընկերներ Պայմանագրեր	հատվածի	Հանրային հաշվապահություն/ Ձեռքբերում Վաճառքներ
Հ6	Ձեռքբերումների մշակում և տվյալների տրամադրում համապատասխան ենթամոդուլին	Հանրային հաշվապահություն/ Ձեռքբերում	հատվածի	Հանրային հաշվապահություն/ Պաշարներ, Ծառայություններ Հիմնական միջոցներ Գործընկերների հաշվառում Պայմանագրերի կառավարում

Հ7	Մինթետիկ ձևակերպումները ամփոփ տվյալները Պաշարների ճառայությունների տվյալներ Գործընկերների տվյալներ Պայմանագրերի տվյալներ Հիմնական միջոցների տվյալներ Վաճառքների տվյալներ Աշխատավարձի տվյալներ	և և	Հանրային հատվածի հաշվապահություն/ Պաշարների ճառայություններ Գործընկերներ Պայմանագրեր Հիմնական միջոցներ Վաճառքներ Աշխատավարձ	և	Հանրային հատվածի հաշվապահություն/ Գլխավոր գիրք
Հ10	Հարկային հաշվետվությունների տրամադրում		Հանրային հատվածի հաշվապահություն/ Գլխավոր գիրք		ՊԵԿ
Հ8	Աշխատակիցների վերաբերյալ տվյալներ		Հանրային հատվածի հաշվապահություն/ Կադրեր		Հանրային հատվածի հաշվապահություն/ Աշխատավարձ
Հ12	Իրացման ամփոփ տվյալներ		Հանրային հատվածի հաշվապահություն/ Վաճառքներ		Հանրային հատվածի հաշվապահություն/ Գլխավոր գիրք
Հ14	Դրամական փոփոխությունների տվյալներ		Հանրային հատվածի հաշվապահություն/ Դրամական հոսքերի կառավարում		Հանրային հատվածի հաշվապահություն/ Գործընկերների հաշվառում Պայմանագրեր կառավարում
Հ11	Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկ		Հանրային հատվածի հաշվապահություն/ Աշխատավարձ		ՊԵԿ
Հ13	Պայմանագրեր և վճարման Ժամանակացույցեր	և	Հանրային հատվածի հաշվապահություն/ Պայմանագրերի կառավարում		Հանրային հատվածի հաշվապահություն/ Վաճառքներ Գանձապետարան/ Ձեռքբերում


ԻԱՊՈՒ1	Իրավաբանական անձանց տվյալները գործընկերների հաշվառման և պայմանագրերի կառավարման համար	ԻԱՊՈՒ,ԲՊՈՒ	Հանրային հատվածի հաշվապահություն/ Գործընկերների հաշվառում Պայմանագրերի կառավարում
ԲՊՈՒ1	Ֆիզիկական անձի տվյալները գործընկերների հաշվառման համար	ԻԱՊՈՒ,ԲՊՈՒ	Հանրային հատվածի հաշվապահություն/ Գործընկերների հաշվառում Պայմանագրերի կառավարում
US2	Հիմնական միջոցների գույքային համարներ և այլ տվյալներ	Պետ Գույք, Կադաստր, Ոստիկանություն (փոխադրամիջոցներ)	Հանրային հատվածի Հաշվապահության/ Զեռքբերում
ԱՀ7	Անհրաժեշտ անալիտիկ տվյալներ	Անալիտիկ-Հաշվետվողական Մոդուլ	Հանրային հատվածի Հաշվապահության
Հ15	Իրացման արդյունքում և Գործընկերների պայմանագրերի տվյալներ	Հանրային հատվածի Հաշվապահության/ Վաճառքներ	Հանրային հատվածի Հաշվապահության/ Գործընկերների հաշվառում Պայմանագրերի կառավարում
Հ16	Պայմանագրերի տվյալներ	Հանրային հատվածի Հաշվապահության/ Պայմանագրերի կառավարում	Հանրային հատվածի Հաշվապահության/ Գործընկերների հաշվառում
Հ17	Դրամական փոփոխությունների հետ կապված տվյալներ	Հանրային հատվածի Հաշվապահության/ Դրամական հոսքերի կառավարում	Հանրային հատվածի Հաշվապահության/ Գլխավոր գիրք
Հ18	Ամբողջական տվյալների տրամադրում	Հանրային հատվածի հաշվապահության մոդուլ	Անալիտիկ Հաշվետվողական մոդուլ
ՊԵԿ2	Նույնականացման տվյալներ Վերահաշվարկի արդյունքում	ՊԵԿ համակարգ	Հանրային հատվածի Հաշվապահության/ Դրամական հոսքերի կառավարում

ԱՀ20

3 Հանրային հատվածի հաշվապահության մոդուլի ֆունկցիոնալ նկարագրություն


Այս գլխում ներկայացվում են այն գործընթացները, որոնք իրականացվելու են Հանրային հատվածի հաշվապահության մոդուլում՝ համակարգի ներդրումից հետո:

3.1 Գործընկերների ձևավորում




Նպատակ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը իրականացնել գործընկերների մակարդակով
Նկարագրություն/ ընթացք	Տարեկան գնումների հայտերը հաստատվելուց հետո Գնումներ մոդուլը տրամադրում է գնումների պայմանագրերը Հանրային հատվածի հաշվապահության մոդուլի Պայմանագրեր ենթամոդուլին, ինչպես նաև Պայմանագրերի ենթամոդուլը պայմանագրեր կարող է ստանալ նոր պարտքերի ներգրավմամբ Պետական Պարտքի մոդուլից և Բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլից, որի հիման վրա արդեն իսկ ձևավորված պայմանագրերի կողմերից Գործընկերների ենթամոդուլում ավտոմատ կերպով կձևավորվի գործընկերների տեղեկատուն: Այն գործարքները, որոնց պայմանագրերը առկա չեն նշված մոդուլներում, կձևավորվեն հաշվապահության կողմից Հանրային հատվածի հաշվապահության Պայմանագրերի կառավարման ենթամոդուլում: Հարցում իրականացնելով ԻԱՊՌ-1 համակարգին՝ կարող է ստանալ պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպության տվյալները գործընկերոջ տեղեկատուն ձևավորելու համար:
Տիրույթ	Գնումների մոդուլ, Պետական պարտքի մոդուլ, Բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլ, ԻԱՊՌ-1 համակարգ, Հանրային հատվածի հաշվապահության Պայմանագրերի կառավարման ենթամոդուլ:
Մուտքային տվյալներ	ՊՊ2, ԲՊ2, ԻԱՊՌ-1, Գ5
Ելքային տվյալներ	Հ16

3.2 Ձեռքբերման գործընթաց




Նպատակ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ձեռքբերման գործընթացի իրականացում
Նկարագրություն/ ընթացք	Կազմակերպության կողմից պայմանագրերի հիման վրա կատարված գնումները E-invoicing համակարգի միջոցով հնարավոր է դառնում որպես ստացված հաշվարկային փաստաթղթերը ներբեռնել Հանրային հատվածի հաշվապահության Ձեռքբերում ենթամոդուլ, որտեղ պետք է կատարվի փաստաթղթի մշակումը, պայմանագրի համապատասխանեցումը: Մշակելուց և փաստաթուղթը գրանցելուց հետո (պաշար, ծառայություն, հիմնական միջոց), տվյալները կարտացոլվեն Պաշարներ, Ծառայություններ, Հիմնական միջոցներ ենթամոդուլներում, իսկ հաշվապահական ձևակերպման տվյալները, ըստ գործընկերոջ, կարտացոլվի Գործընկերներ ենթամոդուլում և ամփոփման համար նաև Գլխավոր գիրք ենթամոդուլում:
Տիրույթ	Պետ գույք, Կադաստր, Ոստիկանություն, E-invoicing, Պայմանագրեր, Ձեռքբերում, Պաշար, Ծառայություն, Հիմնական միջոց, Գործընկեր, Գլխավոր գիրք:
Մուտքային տվյալներ	ԷՀԱ.1.1, Հ13
Ելքային տվյալներ	Հ6.1, Հ6.2.1, Հ6.2.2, Հ6.2.3, Հ7.1

3.3 Մեծածախ իրացում




Նպատակ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեծածախ իրացման գործընթացի իրականացում
Նկարագրություն/ ընթացք	Կազմակերպությունների մեծածախ իրացման գործընթացը իրականացվում է Վաճառքներ ենթամոդուլի միջոցով: Վաճառք գործընթացի իրականացման համար հարցում է անում Պաշարներ, Ծառայություններ և Հիմնական միջոցներ ենթամոդուլից անալիտիկ տվյալների՝ անվանացանկի, չափաքանակի, մնացորդի և այլ տվյալների վերաբերյալ մեծածախ իրացման փաստաթղթի մշակման համար, իսկ Պայմանագրերի կառավարման և Գործընկերների հաշվառման ենթամոդուլներից՝ պայմանագրի պայմանների և գործընկերոջ տվյալների վերաբերյալ: Փաստաթղթի գրանցման արդյունքում Գլխավոր գիրք ենթամոդուլին տրամադրում է հաշվապահական ձևակերպումները ամփոփման համար, իսկ Գործընկերների հաշվառման ենթամոդուլին՝ գործընկերոջ դեբիտորական պարտքի վերաբերյալ տեղեկատվությունը: Ինչպես նաև Վաճառքներ ենթամոդուլից հնարավոր է փաստաթղթի բեռնում E-invoicing համակարգ:
Տիրույթ	E-invoicing, Պայմանագրեր, Պաշարներ, Ծառայություն, Հիմնական միջոց, Գործընկեր, Գլխավոր գիրք, Վաճառք:
Մուտքային տվյալներ	25.1, 25.2, 25.3, 25.4, Հ13,
Ելքային տվյալներ	Հ15.1, Հ3

3.4 Մանրածախ իրացում




Նպատակ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մանրածախ իրացման գործընթացի իրականացում
Նկարագրություն/ընթացք	Կազմակերպությունների մանրածախ իրացման գործընթացը իրականացվում է Վաճառքներ ենթամոդուլի միջոցով: Վաճառք գործընթացի իրականացման համար հարցում է անում Պաշարներ, Ծառայություններ ենթամոդուլից անալիտիկ տվյալների՝ անվանացանկի, չափաքանակի, մնացորդի և այլ տվյալների մշակման համար: Փաստաթղթի գրանցման արդյունքում Գլխավոր գիրք ենթամոդուլին տրամադրում է հաշվապահական ձևակերպումները ամփոփման համար:
Տիրույթ	Պաշարներ, Ծառայություն, Գլխավոր գիրք, Վաճառք:
Մուտքային տվյալներ	25.1
Ելքային տվյալներ	27.2

3.5 Կադրերի գործընթաց



Նպատակ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման կադրերի գործընթացի իրականացում
Նկարագրություն/ընթացք	Կադրերի գործընթացը կազմակերպությունների աշխատակիցների տվյալների հաշվառման և պահպանման համար է, որը հարցում է իրականացում ՔՏՏ համակարգին տվյալների վերաբերյալ, դրանք Կադրերի հաշվառման ենթամոդուլում մշակելու և պահպանելու համար: ՔՏՏ համակարգում չներառված աշխատակիցների տվյալների հավաքագրումը և մուտքագրումը իրականացվում է Կադրերի հաշվառման ենթամոդուլում հաշվապահության աշխատակցի կողմից:
Տիրույթ	ՔՏՏՀ, Կադրեր
Մուտքային տվյալներ	Կ1
Ելքային տվյալներ	


3.6 Աշխատավարձի գործընթաց



Նպատակ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման աշխատավարձի գործընթացի իրականացում
Նկարագրություն/ընթացք	Կադրեր ենթամոդուլը տաբելի տվյալները տրամադրում է Աշխատավարձի հաշվառման ենթամոդուլին յուրաքանչյուր աշխատակցի աշխատարձի հաշվարկը իրականացնելու համար: Աշխատավարձի հաշվարկի հիման վրա աշխատավարձի վճարման համար ձևավորվում է վճարման հանձնարարագիր Դրամական հոսքերի կառավարման ենթամոդուլում, այնուհետև տվյալները փոխանցվում են Գանձապետարան մոդուլին վճարումը իրականացնելու համար: Աշխատավարձի հաշվարկի և վճարման ձևակերպումները տրամադրում է Գլխավոր գիրք ենթամոդուլին ամփոփման համար:
Տիրույթ	Կադրեր, Աշխատավարձ, Դրամական հոսքերի կառավարում, Գանձապետարան, Գլխավոր գիրք

Մուտքային տվյալներ	Հ8
Ելքային տվյալներ	Հ4.1, Հ7.1, Հ2, Հ17.2,


3.7 Դրամական ներհոսքերի գործընթաց



Նպատակ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դրամական ներհոսքերի գործընթացի իրականացում
Նկարագրություն/ընթաց	Կազմակերպությունների դրամական ներհոսքերի գործընթացը նկարագրվում է Հանրային հատվածի հաշվապահության Դրամական հոսքերի կառավարման ենթամոդուլի միջոցով, որը, հարցում իրականացնելով Գանձապետարան մոդուլին հաշիվների մնացորդների, դրանց հետ կապված փոփոխությունների վերաբերյալ, տեղեկատվությունը վերցնելով կատարում է համապատասխան մշակումը, այնուհետև փաստաթղթի գրանցման արդյունքում հաշվապահական ձևակերպումները արտացոլվում են Գլխավոր գիրք ենթամոդուլում ամփոփման համար: Գրանցման արդյունքում տվյալները տրամադրում է Գործընկերների հաշվառման, Պայմանագրերի կառավարման

	Ենթամոդուլներին, որպեսզի իրականացվի գործընկերների պարտքի և նրանց պայմանագրերի պայմանների փոփոխությունը:
Տիրույթ	Գլխավոր գիրք, Գանձապետարան, Դրամական հոսքերի կառավարում, Գործընկերներ, Պայմանագրեր
Մուտքային տվյալներ	Գ22,
Ելքային տվյալներ	Հ17.1, Հ14.1, Հ14.2,

3.8 Դրամական արտահոսքերի գործընթաց



Նպատակ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դրամական արտահոսքի գործընթացի իրականացում
Նկարագրություն/ ընթացք	<p>Կազմակերպությունների դրամական արտահոսքերի գործընթացը նկարագրվում է Հանրային հատվածի հաշվապահության Դրամական հոսքերի կառավարման ենթամոդուլի միջոցով: Գործընկերների հաշվառման և Պայմանագրերի կառավարման ենթամոդուլներին տրամադրում է պարտքի և պայմանագրերի պայմանների տվյալները, իսկ ՊԵԿ համակարգում ձևավորված պարտքի փաստաթղթի համարը և գումարի չափը տրամադրում է վճարման փաստաթղթի մշակման համար: Փաստաթուղթը գրանցելուց հետո Դրամական միջոցների կառավարման ենթամոդուլը տվյալները փոխանցում է Գանձապետարան մոդուլ վճարումը իրականացնելու համար:</p> <p>ՊԵԿ համակարգը տրամադրում է Հանրային հատվածի հաշվապահության Գործընկերների ենթամոդուլին վերահաշվարկի արդյունքում հարկ վճարողներին վերադարձման ենթակա գումարների վերաբերյալ տվյալները: Վերադարձվող գումարի վերաբերյալ տվյալները Գործընկերների հաշվառման ենթամոդուլը տրամադրում է Դրամական հոսքերի կառավարման ենթամոդուլին: Փաստաթղթի մշակելուց և գրանցելուց հետո վճարման տվյալները տրամադրում է Գանձապետարան մոդուլին վճարումը իրականացնելու համար: Դրամական հոսքերի կառավարում ենթամոդուլում գրանցված փաստաթղթերի հաշվապահական ձևակերպումները տրամադրում է Գլխավոր գիրք ենթամոդուլին տվյալների ամփոփման համար:</p>
Տիրույթ	ՊԵԿ, Գործընկերներ, Պայմանագրեր, Դրամական հոսքերի կառավարում, Գանձապետարան, Գլխավոր գիրք
Մուտքային տվյալներ	ՊԵԿ2.1, ՊԵԿ2.2, Հ4.2
Ելքային տվյալներ	Հ14.1, Հ14.2, Հ17.1, Հ2